Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1076[2]-19.01.2011-ՏՏ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 2-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 4-րդ կետում «սահմանումը» բառը փոխարինել «դասակարգումը» բառով.

2. 7-րդ կետում «հողամասի» բառը փոխարինել «ինչպես նաեւ» բառերով.

3. 12-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 3-րդ հոդվածի՝

1. 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում եւ հաստատում են համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը (այսուհետ՝ գլխավոր հատակագիծ), քաղաքաշինական գոտիավորման նախագիծն ու հողերի օգտագործման սխեման, ինչպես նաեւ սահմանում եւ փոփոխում են հողերի նպատակային եւ գործառնական նշանակությունը՝ կառավարության սահմանած կարգով:»:

2. 2-րդ կետի «սահմանված կարգով ու բնակավայրերի գլխավոր հատակագծերին, համայնքների վարչական սահմաններում ներառված հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաներին համապատասխան» բառերը փոխարինել «գլխավոր հատակագծին, քաղաքաշինական գոտիավորման նախագծին եւ հողերի օգտագործման սխեմային համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 7-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

2. 5-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5) համայնքների հողերի օգտագործման սխեմաներում, գլխավոր հատակագծերում:»:

Հոդված 4. Օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա:»:

Հոդված 5. Օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության «գոտիավորման եւ» բառերը հանել:

Հոդված 6. Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում «հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաներով եւ բնակավայրի գլխավոր հատակագծով» բառերը փոխարինել «գլխավոր հատակագծերով եւ քաղաքաշինական գոտիավորման նախագծերով» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Քաղաքաշինական նպատակներով համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերը օգտագործվում են գլխավոր հատակագծերով, քաղաքաշինական գոտիավորման նախագծերով, հողերի օգտագործման սխեմաներով սահմանված նպատակներով եւ փուլերով:»

Հոդված 8. Օրենսգրքի 29-րդ հոդվածի՝

1. վերնագրից հանել «ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԵՎ» բառերը.

2. 1-ին մասում «գոտիավորման եւ» բառերը հանել, իսկ «սխեման» բառից հետո լրացնել «հողաշինարարական փաստաթուղթ է, որը» բառերը:

3. 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Հողերի օգտագործման սխեմաները պետք է պահանջներ պարունակեն սույն օրենսգրքով եւ այլ օրենսդրական ակտերով հողաշինարարության խնդիրների կարգավորման վերաբերյալ՝ տվյալ համայնքին առնչվող մասով:».

4. 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերից «գոտիավորման եւ» բառերը հանել.

5. 4-րդ մասում «կառավարությունը» բառը փոխարինել «համայնքի ավագանին» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 37-րդ հոդվածի՝

1. վերնագրում «ԱՌԱՁԱԴՐՎՈՂ» բառից հետո լրացնել «ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ,» բառը:

2. 1-ին մասում «հողի պահպանությանը,» բառերից հետո լրացնել «քաղաքաշինական» բառը:

3. 2-րդ մասում «ինչպես համալիր, այնպես էլ բնապահպանական» բառերը փոխարինել «քաղաքաշինական, բնապահպանական,» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 42-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 2-րդ կետից «գոտիավորման եւ» եւ «բնակավայրերի» բառերը հանել.

2. 1-ին մասի 5-րդ կետում «համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող տարածքներում» բառերը փոխարինել «մարզի վարչական տարածքում գտնվող» բառերով.

3. 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենսգրքի 57-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Տեղական ինքնակառավարման մարմինները հողամասերը տրամադրում են սույն օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերին, քաղաքաշինական գոտիավորման նախագծերին ու հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան:».

2) 3-րդ, 4-րդ եւ 6-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

3) 5-րդ մասը լրացնել նոր երկրորդ պարբերությամբ, հետեւյալ բովանդակությամբ

«Մինչեւ սույն մասին համապատասխան հողամասի նկատմամբ սահմանված կարգով գույքային իրավունքի պետական գրանցում ստանալը, հողամասը՝ դրա սեփականատիրոջ կամ օգտագործողի կողմից կարող է օգտագործվել նախկին նպատակային կամ գործառնական նշանակությամբ:»:

Հոդված 12. Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության «, իսկ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողամասերի հատակագծերը՝ մարզպետները կամ վերջիններիս կողմից լիազորված անձինք» բառերը հանել:

Հոդված 13. Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «գոտիավորման եւ» եւ «բնակավայրերի» բառերը հանել.

Հոդված 14. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գոտիավորման եւ» եւ «բնակավայրերի» բառերը հանել.

Հոդված 15. Օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «գոտիավորման եւ» եւ «բնակավայրերի» բառերը հանել.

Հոդված 16. Օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասի «բնակավայրերի» եւ «գոտիավորման եւ» բառերը հանել.

Հոդված 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը,	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ կառավարություն	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացում, համաձայն որի քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը մասնակցած նախագծային կազմակերպությունները կամ անձինք չեն կարող կատարել կամ ներգրավվել իրենց կողմից մշակված նախագծերի փորձաքննությանը:	Ընդունվել է	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է 5-րդ մասով:
ՀՀ կառավարություն	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացում, համաձայն որի ՀՀ կառավարության սահմանած տեխնիկապես ոչ բարդ օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը, կառուցապատողի և շինարարություն իրականացնողի համաձայնությամբ կարող է փոխարինվել շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրով:	Ընդունվել է	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է 6-րդ մասով:
	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հաշվի առնելով, որ քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության, շինարարության իրականացման և շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեությունների լիցենզավորման կարգերում կատարված փոփոխությունների համաձայն նշված	Ընդունվել է	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի «16. Քաղաքաշինության բնագավառ» բաժնում կատարվել են համապատասխան

	գործունեությունների իրականացման համար լիցենզավորվող անձանց լիցենզիաների հետ տրամադրվելու են համապատասխան ներդիրներ՝ ըստ ոլորտների:		փոփոխություններ:
ՀՀ ԱԺ պատգամավոր Արայիկ Հովհաննիսյան	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդվածի առաջին մասի 3) ենթակետը հանել:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: